

Ա. ԻճԵԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մեր նոր գրականության ակունքներն հետադոտողը չի կարող անտարբեր անցնել Հարություն Ալամդարյանի՝ այդ շատ ինքնատիպ և հետաքրքրական անհատականության կողքով:

Նա տիպական ներկայացուցիչն է բեկման այն ժամանակաշրջանի, որ ասյրել է հայ ժողովուրդը անցյալ դարի 20—30-ական թվականներին:

19-րդ դարի 20—30-ական թվականներին աշխարհիկ պոեզիայի ամենատիպիկ և տաղանդավոր ներկայացուցիչը Ալամդարյանն է, մեր նոր գրականության առաջին քնարերգուն:

Ալամդարյանը, սակայն, միայն բանաստեղծ չէ. նաև խոշոր մանկավարժ է նա: Մեր լուսավորական կյանքի մեջ ամբողջ մեկ դար անգնահատելի դեր կատարած ուսումնական երկու հաստատությունների՝ Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի հիմնադրումն ու գործունեության առաջին տարիները սերտորեն կապված են Ալամդարյանի անվան հետ: Բավական է ասել, որ նրա, իբրև տեսչի և մանկավարժի, վեցամյա գործունեության շրջանը (1824—1830) Ներսիսյան դպրոցի պատմության մեջ է մտել «Ալամդարյան դար» հորջորջումով: Գործարկելով և ղեկավարելով Ներսիսյան դպրոցի տպարանը, նա մեծ շահով նպաստել է հայկական տպագրության զարգացմանը Անդրկովկասում: Խորապես ըմբռնելով ուսանող լեզվի կարևոր նշանակությունը հայ ժողովրդի կուլտուրական զարգացման գործում, նա դեռևս 1821 թ. հրատարակեց իր «Ռուս-հայ բառարանը» և շարադրեց «Օրենք ուս քերականության» աշխատությունը:

Հար. Ալամդարյանը իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկն էր. նա հմտորեն տիրապետում էր ռուսերենին, գիտեր լատիներենն ու ֆրանսերենը. շատ լավ ծանոթ էր ռուսական և եվրոպական գրականությանը. նա թարգմանել է Տորկվատո Տասսո (մի հատված «Ազատագրյալ Նրուսադեմ» պոեմից), ներշնչվել է Շիլլերի և Բայրոնի պոեզիայով: Ալամդարյանն անձնապես ծանոթ է եղել Գրիբոյեդովի հետ, համակրանքով է վերաբերվել Կովկաս աքսորված ղեկավարիստ Մ. Պուշկինին, աշխատելով թեթևացնել վերջինիս ծանր վիճակը օտարության մեջ¹:

Եվ, վերջապես, Ալամդարյանը նշանավոր է որպես առաջիններից մեկը քաղաքական այն պրոգրեսիվ հոսանքի, որը հայ ժողովրդի փրկությունը տեսնում էր Ռուսաստանի մեջ: 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի

¹ Ա. Աղամյան, նոր փաստաթղթեր ղեկաբրիստ Միխայիլ Իվանովիչ Պուշկինի և 1827—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայկական կամավորական զույգ կազմակերպիչու մասին (Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1932, № 4, էջ 103—110):

Ի. Ենիկոլոպովը հավանական է համարում, որ Մ. Ի. Պուշկինի հետ Ալամդարյանը ծանոթացած լինի դեռևս Մոսկվայում: Տե՛ս Ի. Է. Енколопов, Грибоедов и Восток, Ереван, 1954, стр. 165.

ժամանակ նա եռանդուն մասնակցություն է ունենում առաջին հայ կամավորական ջոկատի («Հայոց դորք»-ի) կազմակերպման գործում: Հայրենասիրական ոգեշունչ ճառով նա քաջալերում է ռազմաճակատ մեկնող հայ ղինվորներին և բացատրում առաջիկա ճակատամարտերի սլատմական-ազատագրական մեծ խորհուրդը: Երևանի գրավումը ցնծադին ողջունելով, նա «ամենասիրելի հույրենեաց» փրկութիւնը «յերկարի հնոցէ պարսկական բռնութեանց» համարում է «դարագլուխ ազատութեան և երանութեան մերոց ապագայից»:

Ալամդարյանի կարճատև, բայց բեղմնավոր գործունեությունը արժանի է լուրջ ուշադրության և սլատշաճ դնահատականի: Ներկա հոդվածում, սակայն, մեր խնդիրն է, փաստական նոր տվյալների հիման վրա, մի քանի ճշգրտումներ առաջարկել Ալամդարյանի մասին գոյություն ունեցող գրականության մեջ:

Հարություն Ալամդարյանի՝ մեզ հասած բանաստեղծություններից ժամանակագրական կարգով առաջինը («Նաղիւլոյս դէմքն էր ճերմակ ու կարմիր...») թվագրված է՝ 1821, օգոստոսի 12:

Տվյալներ կան այն մասին, որ Ալամդարյանը սկսել է ստեղծագործել ավելի վաղ սլատանեկան հասակից: Գար. Պատկանյանի Վկայությամբ, դեռևս Աստրախանի Աղաբաբյան զսրոցում ուսանելիս, մոտավորապես 1812—1813 թթ. նա գրել էր երկու երգիծական բանաստեղծություն Սերովբե վարժապետ Պատկանյանի դեմ. «...Երկու դիմառնություն էր շարադրել՝ շատ կծու և անսլարկեշտ խոսքերով, մեկը՝ «Կայեն և Արել», և մյուսը՝ «Սալուլ և Դավիթ»: ...Երբ Սերովբե վարժապետը կարդաց այս ոտանավորները, այնքան շղայրացավ նորա ստգտանաց վերա, որքան ուրախացավ նորա հաջողակ գյուտերու և գեղեցիկ շարադրության վերա»¹: Որ Ալամդարյանը սլատանեկան հասակից բանաստեղծություններ է գրել, այդ վկայում է, անուղղակի կերպով, Մանվել վարդապետ Կյումուշխանեցին՝ 1815 թ. գրած իր մի նամակում Ալամդարյանին հեգնորեն կոչելով «դեռաբույս բառաստեղծ — Հոմերոս»²:

Այս առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ «Պարերգութիւն» («Յերկու ձեռին, երկու մոմ...») հայտնի բանաստեղծության գրության ժամանակի հարցին:

Միք. Միանսարյանը³, ապա նաև, նրան հետևելով, Վրթ. Փափաղյանը⁴ և Լեոն. Մանվելյանը⁵ սլնդում են, թե Ալամդարյանն այդ բանաստեղծությունը գրել է իր նշանագրության առթիւ, 1813 թ. Ասարախանում:

Փաստերը, սակայն, այդ սլնդումը չեն հավաստում: Նախ՝ «Չափաբերականք»-ում հիշյալ բանաստեղծության տակ սլարդորոշ նշված է գրության ժա-

¹ Պարզվում է, որ Գ. Պատկանյանը, բացի «Հյուսիս»-ում տպագրված կենսագրական համառոտ ակնարկից, գրած է եղել Ալամդարյանի ավելի ընդարձակ կենսագրությունը, որ զգալի չափով հիշողությունների րնույթ է կրում: Այս վերջինը նորերս հայտնաբերել է Պետական կենտրոնական արխիւի ավագ դիտ. աշխատակից ընկ. Գր. Հարությունյանը:

² Գրականության և արվեստի թանգարան, ֆ. 1, թ. 139:

³ «Քնար հայկական», Պետերբուրգ, 1868, էջ XIII:

⁴ «Պատմություն հայոց գրականության (բանահյուսության պատմություն) ըսկզբից մինչև մեր օրերը», Թիֆլիս, 1910, էջ 326:

⁵ Ռուսահայ գրականության պատմություն, Ա, Ալեքսանդրապոլ, 1909, էջ 25 և 28:

մանակը և վայրը՝ «1 հոկտեմբերի 1821, ի Մոսկով», և ասյա՝ բանաստեղծության բովանդակությունից էլ երևում է, որ այն գրված է Ալամդարյանի կնոջ մահվանից (1821, օգոստոս) հետո: Վշտահար բանաստեղծը վերապրում է իր նշանադրության երջանիկ պահը և իր բոբբոքված երեակայության մեջ մի վայրկյան վերակենդանացնում է սիրած էակի հրապուրիչ կերպարը. պատրանքը, սակայն, շուտով տեղի է տալիս դաժան իրականության առաջ. բանաստեղծը կրկին մնում է մենակ իր ահավոր վշտի հետ:

Այլևս որևէ տարակուսանք չի մնում, որ «Պարերգություն»-ը գրված է ոչ թե 1813 թ., այլ, ինչպես նշված է, 1821 թ. հոկտեմբերի 1-ին:

Այսպիսով, Ալամդարյանի՝ մինչև 1821 թ. գրած բանաստեղծություններից ոչ մեկը չի պահպանվել: Մնում է ենթադրել, որ դրանք եղել են սոսկ նախափորձեր, որ, բանաստեղծն ինքը, կարևորություն չտալով, ոչնչացրել է:

Ուշագրավ է, որ Ալամդարյանի՝ մեր ձեռքը հասած բանաստեղծություններից ժամանակագրական կարգով առաջինը («Նազելույ՛ դէմքն էր ճերմակ ու կարմիր...») գրված է կնոջ՝ Մարգարիտի մահվան իսկ օրը՝ 1821 թ. օգոստոսի 12-ին. նույն ամսին և նույն առթիվ են գրված նաև «Կոծ» («Յար վառ է կայծ սիրոյ սիրոյդ...»), «Սուգ» («Նոյս իմ ի քոյ ահա լաշխարհիս...») և «Թշուառութիւն սոխակի» բանաստեղծությունները:

Գար. Պատկանյանը նկատում է, թե «Անմխիթար սգավորությունը (այսինքրն՝ սիրած էակի վաղաժամ մահվան վիշտը — Ա. Ի.) բացեց նորա համար մեկ նոր դուռն եղերերգական բերթության»:

Եվ այս շատ ճիշտ ու նուրբ դիտողություն է Ալամդարյանի ստեղծագործական հոգեբանությունը ըմբռնելու տեսակետից: Քնարերգությունը խորն ապրված հույզի անմիջական արտահայտություն է, նույնքան բնական ու անզուսպ, ինչպես ծիծաղի պոռթկումը և ցավի ճիչը: Եվ ահա Ալամդարյանի հոգում կուտակված անփարատելի վիշտը ելք է գտնում «եղերերգական» (սելեգիական) բանաստեղծության ձևով: Ի մոտո ծանոթանալով Ալամդարյանի կյանքի հանգամանքներին, լիովին պարզ է դառնում, թե ինչու՝ երեք տասնյակից մի փոքր ավելի նրա բանաստեղծությունների ավելի քան կեսի նյութը կազմում են սերը և մահը:

Ալամդարյանի քնարական բանաստեղծություններից լավագույնները, դեռևս իր կենդանության օրով, ձեռից-ձեռ են անցել, եղանակվել ու երգվել: Այդ մասին է վկայում Խաչ. Աբովյանը, որը 1836 թ. մայիսին, Դորպատից հայրենիք վերադառնալիս, կանգ առնելով Նոր-Նախիջևանում, այցելում է իր ուսուցչի շիրիմին և Ալամդարյանի հիշատակը հարգելու համար հավաքված նախիջևանցիներին դիմելով ասում է. «Տաղը և երգը նորա մինչև ցայսօր կան կենդանի ի բերանս և ի հոգիս զառակաց ձերոց...»¹: Գաբր. Պատկանյանը նկարագրելով Ալամդարյանի բեղմնավոր գործունեությունը Թիֆլիսում, ավելացնում է. «Խնջույից և խրախճաններու մեջ (լսվում էին) նրա քաղցրածայն երգերը, որ ազգային եղանակ զգեցան»²:

Ալամդարյանի երգերի տարածված լինելու մասին է վկայում նաև հետևյալ ուշագրավ փաստը. «Բազմավեպ»-ի խմբագրությունը 1850 թ. «Ռամկան երդեր» բաժնում տպագրում է «Թշուառութիւն սոխակի» բանաստեղծությունը:

¹ Դիվան Խաչ. Աբովյանի, հ. II, էջ 45:

² «Հյուսիս», 1863, № 2, էջ 11—13:

նք, և, հենվելով Գ. Շերմադանյան-Վարդանյանցի կարծիքի վրա, կասկածի տակ է առնում այդ երդի՝ Ալամդարյանի ստեղծագործությունը լինելու փաստը. «Որովհետև Հարություն վարդապետ Ալամդարյանց այս երգս շատ կսիրեր և հաճախ կերգեր, զոր և ինքն առաջին անգամ Վրաստան ընկած, անոր համար կկարծվեր, թե ինքր շարադրած ըլլա, բայց վերջեն իմացվեցավ, որ հնուց ի վեր կերդվի եղեր, և թե հեղինակը ո՛վ է՝ անհայտ է: Այսուամենայնիվ Վրաստան մինչև հիմա ալ այս երգս «Տաղ Հարություն վարդապետի» կկոչեն»¹:

Նիկ. Տեր-Շմալոնյանը, որ Ներսիսյան դպրոցում աշակերտել էր Ալամդարյանին, Գ. Պատկանյանի «Արարատ» ամսագրում տպագրած պատասխանամակում հերքելով «Բազմավեպ»-ի կարծիքը, նոր և հետաքրքրական փաստեր է բերում այն մասին, որ «Թշուառութիւն սոխակի» բանաստեղծությունը լայն տարածում է ունեցել և երգվել է ո՛չ միայն Արևելյան Հայաստանում, այլև Թուրքիայում և հնդկահայ գաղութում.

«Հարիրաւոր աշակերտք հանդուցեալ Ալամդարեանի, որք այժմ կենդանի են,— գրում է նա,— յորոց միջի եմք ես և պարոն Վարդանեանցն, գիտեմք զժամանակն, զտեղին և զպատճառն յօրինելոյ նորա զայս, գիտէ զայս ամենայն և պարոն Վարդանեանց... «Թշուառութիւն սոխակի» ասացեալ երգն... սիրեն և երգեն ի Թիֆլիզ, ի Հայաստան, երգեսցեն և ի Պոլիս, ի Զմիւռնիա, և ի Հնդկաստան, և այժմէն իսկ առաջի աչացս նկարագրեմ զսիրելի տեսարան, երբ սիրասուն օրիորդք Զմիւռնիոյ ի խնդրելն զհանգիստ յետ տնային աշխատութեանց, ճեմս առեալ ի պարտիզի, աջակցեալ ընդ իւրեանց սիրականաց և անցեալ առաջի թփոյ վարդի, երգեն քաղցրութեամբ. «Ա՛յ իմ վա՛րդ, վա՛րդ, իմ կենացս զա՛րդ, զա՛րդ...»²:

Ալամդարյանի երգերը տարածվել են ձեռագիր երգարանների և ժողովածուների միջոցով: Ուշագրավ է, որ 20—30-ական թվականներից սկսած մինչև 70—80-ական թվականները, և դեռ ավելի ուշ, մեզ ծանոթ համարյա բոլոր ձեռագիր-երգարաններում տեղ են դրել նրա յավագույն տաղերը, մասնավորապես՝ «Պարերգութիւն»-ը («Յերկու ձեռին երկու մոմ...»), «Գարուն»-ը («Յամսավերջն ասլրիլի զպատուհանս բացի...»), «Թշուառութիւն սոխակի» և այլն:

Հիշյալ ձեռագրերը հնարավորություն են տալիս ճշգրտելու Ալամդարյանի բանաստեղծություններից մի քանիսի, ինչպես նաև «Հռամիզդ և Զինորիա» ողբերգության վերաբերյալ ցարդ եղած հակասական տվյալները և փարատելու տարակուսանքները:

Ալամդարյանի բանաստեղծություններից հինգը, այն է՝ «Ողբերգութիւն Իսրայէլի», «Տեսիլ», «Տաղաշափութիւն», «Տաղերգութիւն» և «Աղօթք», դեռևս հեղինակի կենդանության օրով տպագրվել են «Նրախայրիք Ներսիսեան դպրոցի» ժողովածուի մեջ (1828, Տիֆլիս): Տարակուսանք է պատճառում այն, որ հիշյալ բանաստեղծությունների տակ Ալամդարյանի ստորագրության փոխարեն գրված է՝ «Ասաց Գրիգոր Յովսէփեան Մելիքեանց, աշակերտ վեցերորդ դասակարգի (դասատան) Ներսիսեան դպրոցի»: Վերոհիշյալ բանաստեղծությունները տպագրվել են «Զափարեականք»-ում: Ի՞նչ հիմք ունենք դրանք Ալամդարյանին համարելու Գուցե՞ դրանց հեղինակը հենց նույն Գրիգոր Յովսէփեան Մելիքեանցն է, որ, ինչպես Ներսիսյան դպրոցի աշակերտների ցու-

¹ «Բազմավեպ», 1850, № 21, էջ 340—341:

² «Արարատ», 1851, № 23, էջ 362—364:

ցակից էլ երևում է, այդ ժամանակ վեցերորդ դասարանի աշակերտ էր: Ընդ ինչու՞ Ալամդարյանն իր ստորագրությունը չի դրել այդ բանաստեղծությունների տակ: Նկատի ունեցե՞լ, որ ժողովածուն նախատեսված էր աշակերտական շարադրությունների և գրական փոքրիկ համար. «Առաջիկա շարադրությունը կամ թարգմանությունը, — ասված է «Երախայրիք»-ի առաջաբանում, որ, ամենայն հավանականությամբ ուսուցանում է Ալամդարյանի գրչին, — տպագրին առանց խառնելու դասատուացն ընդ այնոսիկ դսեթնեթս ուսմանն ուց, որովհետ ղի տեսեալ հասարակութեանն զարդի հմտութիւն համբակաց՝ դիտասցէ ի հաջորդ հարցութիորձի զչափ վերելից նոցա ընդ դժուարակոխ աստիճանս մակացութեանց»:

Խնդիրն այն է, որ վերոհիշյալ ստորագրությունից բնավ չի հետևում, թե բանաստեղծությունների հնչյունակը Գրիգոր Հովսեփյան Մելիքյանցն է, քանի որ՝ «Երախայրիք»-ում տպագրված բանաստեղծությունների ստորագրությունները սովորաբար սկսվում են «շարադրեալ» կամ «յօրինեալ» բառերով, ինչպես, օրինակ՝ «Ճարադրեալ յաշակերտէ վեցերորդ դասատան ուսումնարանի հայոց ի Ստեփաննոսէ Եսայեան նաղարեանց», կամ՝ «Յօրինեալ յաշակերտէ և ի դասատուէ քերականութեան և ճարտասանութեան յԱռաքել դպրէ Արարատեանց», մինչդեռ Հար. Ալամդարյանի հիշյալ բանաստեղծությունների տակ, ինչպես վերը արդեն նշեցինք, սրված է՝ «Ասաց... Գրիգոր Հովսեփյան Մելիքյանց»: Այս նշանակում է, որ Գ. Հ. Մելիքյանցը հեղինակը չէ, այլ ասացողը, ուրիշ խոսքով, նշված տաղերը նա ո՛չ թե շարադրել կամ հորինել է, այլ «ասել» — արտասանել է դպրոցական հանդեսի՝ «հրապարակական հարցաքննություն» ժամանակ, որ, ըստ սահմանված կարգի, տեղի էր ունենում յուրաքանչյուր տարվա վերջում՝ աշակերտների ծնողների, դպրոցի հոգաբարձուների և աստիճանավորների ներկայությամբ:

Այս հարցի վերաբերյալ ունենք նաև Միք. Պատկանյանի վկայությունը. վերը նշված հոդվածում խոսելով Ալամդարյանի բանաստեղծությունների մասին, նա ավելացնում է, թե դրանք «հետո տպվեցան «Երախայրիք ներսիսյան ուսումնարանի» [դպրոցի] գրքույկումը, այսպիսի հատկանիշ ստորագրությամբ՝ «Ասաց Իրիգոր Մելիքյանց»¹:

Այս ամենին ունեցե՞լ ավելացնենք հետևյալ փաստը ևս. «Արգասիք ներսիսյան դպրատան» անտիպ ժողովածուի երկրորդ հատորում զետեղված են Ալամդարյանի «Ճաստանագիրք» շարքից մի քանի բանաստեղծություններ, որոնք նախատեսված ստորագրված են եղել «Գրիգոր Յ. Մ. ի Տիխիսայ» կամ «Գրիգոր Յովսեփեան Մելիքեանց», սակայն Առ. Արարատյանի ձեռքով ուղղված են՝ «Յարուրիւն վ. Ալամդարեանց» կամ՝ «Յար. վարդ. Ալամդ.», և կամ՝ «Յ. վ. Ալամ.»: Իսկ Առ. Արարատյանին շփոթահել չենք կարող, քանի որ նա Ալամդարյանի տեսչության տարիներին նախ ուսանել, ապա և սլաշտոնավարել է ներսիսյան դպրոցում, ինչպես և աշխատակցել է «Երախայրիք»-ին:

Այսպիսով, կարծում ենք, բերված փաստերը այլևս տարակույս չեն թողնում, որ «Երախայրիք ներսիսեան դպրոցի» ժողովածուի մեջ «Գրիգոր Հովսեփյան Մելիքյանց» ստորագրությամբ տպագրված հինգ բանաստեղծությունների հեղինակը Հարություն Ալամդարյանն է:

¹ «Մեղու հայաստանի», 1865, № 23, էջ 198 - 201:

Միք. Պատկանյանը 1865 թ. գրում էր, թե Ալամդարյանի «առանց տպագրության» մնացած երկերից իրեն հայտնի են «շատ երգեր և առակներ, որ հավաքած ունին Մովսես ավագ քահանայն Սայաթնյանց և աստիճանավոր Սողոմոն Քեթիսուդյանցը, որք և խոստանում են շուտով տպագրությամբ հրատարակել»¹:

Ալամդարյանի մասին գոյություն ունեցող գրականության մեջ սա առաջին վկայությունն է այն մասին, որ նշանավոր քնադատները գրել է նաև առակներ:

Միք. Պատկանյանի հիշյալ հոդվածից երեք տարի հետո, Միք. Միսնասուրյանը «Քնար հայկական»-ում տպագրած «Առյուծ և էջ» խորագրով առաջին տպի գրել է հետևյալ ծանոթությունը. «Նիկողոս (Նիկողայոս) Տեր-Շմավոնյանցի՝ Հարություն Ալամդարյանի աշակերտի հեղինակություն կհամարվի: Ոմանք էլ Հարություն վարդապետինը կկարծեն»²: Ա. Այվազյանը առանց վերապահության Ալամդարյանի բանաստեղծությունների շարքում հիշատակում է նաև «Առյուծ և էջ» առակը³:

Ընկ. Աս. Մնացականյանը 1941 թ. Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի № 1-ում վերատպելով հիշյալ առակը, հաղորդում է, որ ինքը այն գտել է 1850 թ. ընդօրինակված մի ձեռագիր տաղարանի մեջ՝ Ալամդարյանի մի քանի բանաստեղծությունների շարքում: Հենվելով այս փաստի վրա, հոդվածագիրը, անկասկած է համարում, որ առակը պատկանում է Ալամդարյանի գրչին:

Այդ նույն առակը վերջերս մենք հանդիպեցինք Պերճ Պոռչյանի ֆոնդում պահվող «Քերթնածք Յարութին վ. Ալամդարեանց» խորագիրը կրող տետրում, որն ընդօրինակված է բնագրից, ինչպես հավաստիացնում է գրիչը. «Յիսկական օրինակաց հեղինակին գծագրեաց Արիստակէս Յարութինեան նրդրնկեանց ի Հաղբատայ, 1841»⁴ (ընդգծումը մերն է — Ա. Ի.):

Ուշագրավ է Աս. Մնացականյանի հայտնաբերած տեքստի վերջին երեք տող բացատրականը, որ, ըստ երևույթին, ավելացրել է ընդօրինակողը, որպես ղրնկեանց ի Հաղբատայ, 1841»⁴ (ընդգծումը մերն է — Ա. Ի.):

Եթե խելք ունիս դե շուտ իմացիր
Ո՛վ է առյուծը, ո՛վ՝ իշի ընկեր:

Ահա՛ և տրված բացատրությունը.

Առյուծը ներսես եպիսկոպոսն է,
էշն Հովհաննես կաթողիկոսն է,
Աքլորն՝ գրած պատմիչն (?):

Ընկ. Աս. Մնացականյանը իրավացի է, առաջարկելով «գրած պատմիչն» բառերը կարդալ «գրաֆ Պասկեիչն»⁵: Մեր կարծիքով «գրաֆ Պասկեիչն» դարձել է «գրած պատմիչն» ոչ թե աղավաղման հետևանքով, ինչպես բացատրում է Աս. Մնացականյանը, այլ հիշյալ տողերի հեղինակը պարզապես զգուշացել է Պասկեիչի անունը հիշատակելուց:

¹ «Մեղու Հալաստանի», 1865, № 25, էջ 198—201:

² «Քնար հայկական», Ս. Պետերբուրգ, 1868, էջ 433—434:

³ Ա. Այվազյան, Շար հայ կենսագրութեանց, հ. Ա., էջ 132:

⁴ ԳԱԹ, Պերճ Պոռչյանի ֆ., № 53:

⁵ «Գիտական նյութերի ժողովածու», 1941, № 1, էջ 188:

Վերը բերված բացատրականը լույս է սփռում առակի բուն իմաստի վրա: Այդտեղ մենք տեսնում ենք ժամանակի իրադարձությունների որոշակի արձագանքը: Ինչպես հայտնի է, Պասկևիչը նկատելով ներսես Աշտարակեցու օսլոզիցիոն տրամադրությունները, նրան արքսորել տվեց Բեսարաբիա, նրա փոխարեն Թիֆլիսի թեմի առաջնորդ, ասլա և կաթողիկոս դարձնելով Հովհաննես Կարրեցուն: Վերջինիս փառամոլությունն ու ընչաքաղցությունը գոհացնելով, ցարական սատրապը նրան իր ձեռքին ծառայեցնում էր որպես կույր գործիք՝ ընդդեմ ներսես Աշտարակեցու և Ալամդարյանի:

Ալամդարյանի առակը և նրա ստեղծման հանգամանքները մի ավելորդ անդամ հաստատում են այն դրույթը, թե գրականության աշխարհականացումը իրականության հրամայական սլահանջն էր. և առակն էլ, իբրև ամենակենսական ժանրերից մեկը, կյանքի էր կոչվում այդ նույն իրականության լիարժեք դրանքով:

Գրական այս վավերագիրը կարևոր նշանակություն է ստանում նաև այն պատճառով, որ դա, — ինչքան մեղ հայտնի է, — հայ նոր գրականության մեջ առաջին աշխարհաբար առակն է: Այն կարևոր է նաև Հար. Ալամդարյանի ստեղծագործական զարգացումը բացահայտելու տեսակետից: «Առյուծ և էջ» առակը վկայում է, որ Ալամդարյանը, անցյալ դարի 30-ական թվականների սկզբից որոշակի քայլեր է արել աշխարհաբար գրելու ուղղությամբ¹: Ճիշտ է. Միք. Պատկանյանի նշած «շատ» առակներից առաջին մեղ հայտնի է միայն մեկը, բայց այս էլ բավական է հավաստելու Ալամդարյանի որոշակի տենդենցը և շրջադարձը դեպի աշխարհաբարը:

Անհավանական չէ ենթադրել, որ Խաչ. Արովյանն այս հարցում առաջին ազդակը, թերևս, ստացած լինի իր ուսուցչից, որին նա այնքան ջերմ, երախտագիտական խոսքեր է ձոնել:

Հար. Ալամդարյանի մասին գոյություն ունեցող գրականության մեջ նրա «Հռամիզդ և Զենոբիա» պատմական ողբերգության մասին առաջին անգամ հիշատակվում է 1925 թ. «Հայարտուն» հանդեսում: Հոգևածագիրը բերում է ողբերգության ձեռագրի անվանաթերթը՝ «Հռամիզդ և Զենոբիա, եղբերգություն յարարս երիս, 1883², ի ս. Խաչ վանքն Նոր-Նախիջևանայ, աշխատասիրութեամբ Յարութին վարդապետի Ալամդարեանց»³: Հետագայում Ա. Երեմյանը իր «Ռուսահայ թատրոնի պատմությունը» աշխատության առաջին հատորում «Հռամիզդ և Զենոբիա» ողբերգության մասին հաղորդում է նոր տեղեկություններ, որոնք զուրկ լինելով որևէ հաստատուն կուլանից, տարակուսանքների դուռ են բաց անում. «Այս պիեսի տպագիր մի օրինակը գտնվում է մարքսիստ քննադատ Ա. Մելիքյանի մոտ...» — հայտարարում է Երեմյանը և ավելացնում. «Ժողովրդական դերասան Իսահակ Ալիխանյանը հայտնեց մեզ, որ հիշյալ պիեսի տպագիր մի օրինակը տեսել է 1892 թ. Թիֆլիսի ներսիսյան դրսորդի հին շինության գրադարանում»⁴: Ըստ այս տեղեկությունների, Ալամդարյանի «Հռամիզդ և Զենոբիա» ողբերգությունը տպագրված է եղել: Ինք, Երեմյանը, պիեսի տպագիր օրինակը չի տեսել ((և չէր էլ կարող տեսնել մի գիրք,

¹ Բովանդակությունից ելնելով, առակի գրության ժամանակը պետք է համարել ոչ ուշ, քան 1831—1832 թթ.:

² Ինչպես հոգևածից էլ երևում է, տպագրական վրիպակ է. պետք է լինի՝ 1833:

³ «Հայարտուն», Բաքու, 1925, № 1, էջ 64—65:

⁴ Ա. Երեմյան, Ռուսահայ թատրոնի պատմությունը, Ա. հատոր, Վենետիկ, 1933, էջ 82—83:

որ երբևէ տպագրված չի եղել), ուստի չի պնդում, թե տեսանք, այլ կրավորական ձևով ասում է՝ «գտնվում է...» որ նշանակում է, թե նա այդ մասին լսել է ուրիշներից և ինքն էլ լսածն է միայն, որ իր հերթին փոխանցում է ուրիշներին, առանց լսածը ստուգելու։ Այն հանգամանքը, որ ոչ մի բառ չի ասում պիեսի բովանդակության, թեկուզ նյութի մասին, վկայում է, թե նա անծանոթ է նույնիսկ ձեռագրին (ի դեպ՝ այդ մասին բացարձակապես ոչինչ չի ասված նաև «Հայարտուն» հանդեսում)։

Բանասիրական որևէ հիմքից զուրկ նման արատրակտ «հայտնություններն», ի՛նչ խոսք, տարակուսելի էին դարձնում Ալամդարյանի ողբերգության ձեռագրի գոյության փաստն իսկ։

Դրանից մոտ քսան տարի հետո է, որ մեր Պետական Մատենադարանում ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Շուշանիկ Նազարյանի ջանքերով ի հայտ է բերվում Ալամդարյանի հիշյալ պիեսի մի ընդօրինակությունը։ Ձեռագիրը, սակայն, չէր պարունակում պիեսն ամբողջությամբ, այլ միայն առաջին գործողությունը և յոթ տեսարան երկրորդ գործողությունից։ Ալամդարյանի նորահայտ այս երկի հիշյալ ձեռագիրը հիմք ունենալով, ֆիլ. գիտ. թեկնածու Վ. Խնդիրբաշյանը Ակադեմիայի «Տեղեկադրում» անցյալ տարի տպագրեց «Հրամիզդ և Զենոբիա» պատմական դրամայի մասին հոգվածը¹։

Վերահիշյալ հոգվածներում արծարծված հարցերից մի քանիսը, մեր կարծիքով, կարիք ունեն ճշգրտման և լրացուցիչ փաստարկման, ուստի և հարկ ենք համարում անդրադառնալ դրանց.

Այդ, ե՛րբ է գրել Ալամդարյանն իր ողբերգությունը և արդյոք ավարտե՞լ է այն, թե ոչ։

Այս մասին մենք ունենք երկու հավաստի վկայություն, որոնք լիովին իրար համապատասխանում են և սպառիչ պատասխան են տալիս առաջադրված հարցին։

Առ. Արարատյանը, որ, ինչպես գիտենք, Ալամդարյանի աշակերտներից էր, աշխատակցել էր «Երախտյութ»-ին և ասյա կազմել «Արդասիք սերսիսյան դպրատան» ձեռագիր ժողովածուները, վերջինիս երկրորդ հատորում զետեղելով իր ուսուցչի բանաստեղծությունները, — 1851 թ. հունվարին գիմում է Մսեր Մսերյանին, խնդրելով ուղարկել իրեն Ալամդարյանի ողբերգության ձեռագիրը։ Մսերյանը նույն թվականի հունվարի 28-ի նամակում նրան գրում է հետևյալը.

«Զբարեհիշատակ հ[օր] 3. Վ. Ալամդարեան զեղերերգութիւն «Հրամիզդ և Զենոբիա» օրինակեալ էի ի Քիշնե ի Ինագրէ հեղինակին, դտելոյ ի ձեռս քահանայի ուրումն Նախիջևանցւոյ, և ասպ զիմ գրածն տուեալ առեալ էի զբնագիրն, զոր և առ իս ունելով ի գալն իմ այսր րնծայեալ եմ որդեգրի երանելոյն՝ Զարութիւն քահանայի Ալամդարեանց (խոսքը Հարություն քահանա Գեորգեյանի մասին է, որ Ալամդարյանի որդեգիրը լինելով, նրա մահից հետո մի առ ժամանակ կրում էր իր հոգևոր հոր անուն-ազգանունը — Ա. Ի.)։ Սակայն, — շարունակում է նամակագիրը, — առ ի լնուլ զփափագ մտերմիդ, առեալ վերջստին զնոյն իսկ Ինագիրն՝ հասուցից առ Ձեզ կամ փոշտով կամ ընդ ձեռն ուղևորաց։ Այս գործ ի բնագրին ևս քերի է, զի մինչև ժամանեալ էր հեղինակն

¹ Հայկական ՍՍՏ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտությունների սերիա, № 3, 1956, էջ 57—68։

յաւարտումն նորին՝ զիւրն աւարտեալ զկեանս՝ աղետալից մահուամբ¹» (ընդդժումն իմն է — Ա. Ի.).

Մյուս վավերագիրը պատկանում է Ավետիք հազեզյանի գրչին։ Խազեզյանը Նոր-Նախիջևանցի է, Նալբանդյանի դպրոցական ընկերը և նրա մահվան «ոթիվ» «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում տպագրված առաջին կենսագրական հոդվածի հեղինակը։ Գրական իր նախափորձերը Միք. Նալբանդյանի և Ռափ. Պատկանյանի հետ միաժամանակ նա տպագրել է Գաբր. Պատկանյանի՝ իր ուսուցչի «Արարատ» ամսագրում։ Նա հրատարակել է Սերովբե Պատկանյանի տաղերը, և, վերջապես, տպագրության է պատրաստել Հարություն Ալամդարյանի «Լիակատար երկասիրությունք», որ, մեզ անհայտ պատճառներով, հնարավորություն չի ունեցել հրատարակելու։ Խազեզյանի պատրաստած՝ Ալամդարյանի երկերի հիշյալ ձեռագիր-ժողովածուն այժմ գտնվում է Գրականության և արվեստի թանգարանում, Գաբր. Պատկանյանի ֆոնդում։ Ուշագրավ է, որ ժողովածուն խորագրված է «Հռամիզդ և Զենոբիա»։ ահա՛ լրիվ անվանաթերթը. «Հռամիզդ և Զենոբիա, եղբերգություն յօրինեալ ի Յարութին վարդապետէ Ալամդարեանց. հանդերձ վարձագրութեամբ հեղինակին և քանի մի ընտիր և դեղեցկահիւս երգովք նորին, ի լոյս ածեալ աշխատասիրութեամբ Աւետիքայ Խազեզեանց։ Ի Ս. Պետերբուրկ, ի տպագրատան ֆ. ֆ. [?], 1858»։ Ձեռագրի թերթերի վրա, սկզբից մինչև վերջ, գրված է գրաքննչի ստորագրությունը՝ Бероев (Մկրտիչ Բերոյան), որ նշանակում է, թե ժողովածուն նույնիսկ գրաքննության կողմից թույլատրված է եղել տպագրության, բայց, այնուամենայնիվ, չի տպագրվել։

«Առ ընթերցող» խորագիրը կրող առաջաբանում Ավ. Խազեզյանը, համառոտակի տեղեկություններ տալով Ալամդարյանի կյանքի և գործունեության վերաբերյալ, մեզ հետաքրքրող երկի մասին գրում է հետևյալը. «Ի 1833 ամի կարգեցաւ վանահայր սուրբ Խաչ վանուց Նոր-Նախիջևան քաղաքի. — սմին իրի գրեաց ղերկոսին երգս առ սուրբ Խաչն՝ «Անարատ գառին» և «Յառաջ քան դբարերար...», ընդ նմին և գրատրօնական զայս բանաստեղծութիւն չափաբերական, ընդ վերտառութեամբս «Հռամիզդ»։ բայց վաղաժամ մահ նորա շերդ նմա ի կատար գործոյն ժամանել, այլ թէ որպէս եղև այն, պատմեցից ստորև» (ընդդժումն իմն է — Ա. Ի.)։ Այնուհետև Խազեզյանը պատմում է Ալամդարյանի «դբերգական մահվան մանրամասնությունները»։

Սակայն հենց ողբերգության տեքստը բացակայում է ժողովածուից. պակասում են ձեռագրի 6—20 թերթերը. 1—5 թերթերը զբաղեցնում են կալմոզի առաջաբանը և Թ. Խաղամյանի չափածո դամբանականը՝ «Դամբանական ի մահ յարութին վարդապետի Ալամդարեան, երգեալ ի Թէոդորոս Խատամեանէ»։ ալուուհետև, 21—51 թերթերը բռնում են Ալամդարյանի բանաստեղծությունները։

Փաստը ինքնին ցաւալի էր և մտահոգիչ։ Ուր որոնել հանված թերթերը, և առհասարակ՝ ինչպես լուծել Ալամդարյանի այդ երկի շուրջը եղած տարակուսանքները։ Պակասավոր էր Մատենադարանում հայտնաբերված պիեսի ձեռագիրը, իսկ այստեղ ողբերգության խորագիրը կրող ժողովածուից բացակայում էր հենց ողբերգության տեքստը։ Տարակուսանքը փարատեց երկու պակասավոր ձեռագրերի համեմատությունը։ Պարզվեց, որ Մատենադարանում ընկ. Շ. Նազարյանի հայտնաբերած ձեռագիրը հենց ա՛յն է («Հռամիզդ և Զե-

¹ Մատենադարան, Արխիվային բաժին, Մսերյանների ֆ., թղթ. 207, վավ. 2040։

նորիա» ողբերգության տեքստը), որ սլավասում է հաղեղյանի կաղմած ժողովածուից: Այդ ևն ցույց տալիս երկու ձեռագրերի թե՛ էջահամարները, և թե՛ յուրաքանչյուր թերթի վրա դրաքննչի՝ վանկերի բաժանված ստորագրությունը, որ մեկը մյուսին լրացնում են (փակագծում նկատենք, որ նման փաստերը հաղվադեպ չեն մեր արխիվներում, որովհետև ֆոնդային ձեռագրերը ձեռք են բերվել տարբեր ժամանակներում և տարբեր աղբյուրներից, ահա թե ինչու միևնույն հեղինակի ձեռագրերը, նույնիսկ միևնույն երկի առանձին մասերը երբևմնի ի հայտ են գալիս տարբեր արխիվներում և տարբեր ֆոնդերում):

Այսպիսով, պարզվում է, որ Ալամդարյանը հիշյալ ողբերգությունը գրել է կյանքի վերջին շրջանում, 1833—1834 թթ., Նոր-Նախիջևանում, և դժբախտաբար չի ավարտել իր այնքան վաղաժամ և այնքան ողբերգական մահվան պատճառով:

Վերը բերված փաստերը հիմք են տալիս նաև հետևյալին, որ Ալամդարյանի «Հռամիլդ և Զենոբիա» անավարտ ողբերգությունը չի տպագրվել (որպիսի փորձ, ինչպես տեսանք, արել է Ա. Խաղեղյանը) և չի բեմադրվել:

Ինչ վերաբերում է ընկ. Խերղիբաշյանի վերը հիշված հոդվածում բերված այն տեղեկությանը, թե Խեոդորոս Խաղամյանը 40-ական թվականների սկզբին, ի շարսայլ սլատմա-դրամատիկական երկերի «շարադրել» կամ «սլատրաստել» է «Ռամիլդ և Զենոբիա» խորագրով մի պիես, անհավանական չենք համարում ենթադրել, որ Խաղամյանը նոր դործ չի գրել, այլ իր ջերմորեն սիրած ուսուցչի՝ Ալամդարյանի անավարտ ողբերգությունը լրացնելով, բեմադրել է: Ի դեպ, հարկ ենք համարում ճշտել, որ 1834 թ. մայիսին Խ. Խաղամյանը գտնվում էր Նոր-Նախիջևանում. նա այցելում է մահամերձ իր ուսուցչին, մահվան առթիվ գրում է մի հուղիչ չափածո՝ դամբանական, նկարագրում է նրա վերջին օրերն ու ժամերը, ասլա և թաղումը: Իր այս գրության մեջ նա բարձր գնահատական է տալիս Ալամդարյանին. «Առանց կասկածանաց կարելի է ասել, — գրում է Խաղամյանը, — թե նա ի մերումս դարու էր վասն մեր և՛ կամբրոնացի, և՛ Նդիշէ, և՛ Խորենացի... Յառաջադիմութիւն հայ գրականութեան, շսխալիմ, եթէ կարծեցից, թէ քսանհինգ ամօք յետս կոյս նահանջեցաւ... քանզի երիտասարդական հասակ նորա բաղում ինչ խոստանայր մեղ և բաղում ինչ, այո՛, ունէր ընծայել արդիւնաւոր կեանք նորա հայ գրականութեան...»: Այս խանդավառ զդացմունքը, այս ջերմ սերը Խաղամյանը թերևս ցանկացել է մարմնավորել իր վաղամեռ ուսուցչի կիսավարտ երկը ավարտելով և բեմադրելով: Այնուամենայնիվ այս դեռ մնում է սոսկ որպես հավանական ենթադրություն:

Հար. Ալամդարյանի ողբերգության առնչությամբ կուղեինք անդրադառնալ մի հարցի ևս և մեր խոսքը եզրափակել:

Ինչպես հայտնի է, ռուս մեծ դրամատուրգ Ա. Ս. Գրիբոեդովը ևս իր կյանքի վերջին շրջանում ձեռնարկած է եղել գրել մի ողբերգություն հայ ժողովրդի՝ մեր թվականության առաջին դարի սլատմությունից, նույնպես «Ռամիլդիստ և Զենոբիա» խորագրով: Վաղաժամ և ողբերգական մահը Գրիբոեդովին ևս զրկում է իր ստեղծագործական մտահղացումը իրագործելու հնարավորությունից: Նա թողել է հիշյալ ողբերգության միայն սլանը:

Դեռ մինչև Ալամդարյանի ողբերգության ձեռագրի հայտնաբերումը, պատմ. դիտությունների դոկտոր Վ. Պարսամյանը իր «Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» մենագրության մեջ այն կարծիքն էր հայտնել, թե Ալամդարյանի երկը դրված է Գրիբոեդովի անմիջական ազդեցու-

թյամբ. «Եթե Ալամդարյանի ձեռագիր սլիեսը, — գրում է Պարսամյանը, — Գրիբոեդովի գործի սոսկ փոխադրությունը չէ, այլ ինքնուրույն գործ, որ մեզ ավելի հավանական է թվում, ապա այն գրվել է Գրիբոեդովի անմիջական ազդեցությամբ»։ Ի՞նչ հիման վրա է Պարսամյանն այս եզրակացությանն հանգել, երբ, ինչպես նկատեցինք, վերը բերված տողերը գրելիս նա հնարավորություն չուներ ծանոթանալու Ալամդարյանի գործի հետ, քանի որ այն դեռևս ոչ ոք հայտնի չէր։ Եվ ապա. ինչպե՞ս կարող էր Ալամդարյանը Գրիբոեդովի «անմիջական ազդեցությամբ» գրել, երբ ոուս մեծ դրամատուրգի ձեռնարկած ողբերգության սլանը հայտնի դարձավ նրանց երկուսի մահից շատ տարիներ հետո... Ալամդարյանի անավարտ ողբերգության տեքստը համեմատելով Գրիբոեդովի գործի նախագծի հետ, գալիս ենք այն եզրակացության, որ դրանք բոլորովին տարբեր ստեղծագործական հղացումներ են. ընդհանուրը միայն նյութն է, խորագիրը և գործող անձանց մի-երկուսի անունները։

Այն փաստը, սակայն, որ ոուս մեծ դրամատուրգը և հայ ականավոր բանաստեղծ-մանկավարժը գրեթե միաժամանակ ձեռնարկել են գրելու պատմական ողբերգության՝ նյութ ունենալով Հայաստանի միևնույն պատմաշրջանի անցքերը, վկայում է, որ նրանք Թիֆլիսում, թերևս հենց Ներսիսյան դպրոցի վերնահարկում գտնվող «Ազնվականաց կուրում», — ուր, սովորաբար, լինում էին ոուս պետական և զինվորական գործիչները, — հանդիպումներ են ունեցել, զրուցել են իրենց սրտին մոտ գրական խնդիրների շուրջը, մտքեր են փոխանակել Հայաստանի անցյալի ու ապագայի մասին, միմյանց են հաղորդել իրենց ստեղծագործական մտահղացումները՝ ունենալով միանգամայն ուրույն ու տարբեր քաղաքական հայացքներ և էսթետիկական ըմբռնումներ։

Ի՞նչ խոսք, վերը շարադրվածով բնավ էլ չեն սպառվում Ալամդարյանի գրական ժառանգության հարցերը։ Մենք արժարժեցինք դրանցից մի քանիսը միայն։ Ավելի լայն առումով՝ Ալամդարյանի կուլտուրական ժառանգության մեջ են մտնում նրա հայտնի Ռուս-հայ բառարանը, ինչպես և վերջերս հայտնաբերված «Օրէնք ոուս քերականութեան» աշխատությունը և հարյուրավոր նամակներն ու գրությունները, որոնց հանգամանալից ու լրջամիտ ուսումնասիրությունը խիստ կարևոր մի խնդիր է 19-րդ դարի առաջին երեսնամյակի մեր գրական-կուլտուրական զարգացման պատմությունն ստեղծելու ճանապարհահին։